ԿԸՀ 2017թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2017թ. արժեքն է **35** և նա ***Եթովպիայի***, ***Մակեդոնիայի*** և ***Վիետնամի*** հետ միասին **180** երկրների շարքում կիսում է **107-ից 110-րդ տեղերը**: Նախորդ 2016թ. Հայաստանի ԿԸՀ համաթվի արժեքն էր **33** և այդ արժեքով նա **176** երկրների շարքում կիսում էր **113-ից 115-րդ** տեղերը: Նկատի ունենալով Հայաստանի ԿԸՀ-ի համար հաշվարկված ստանդարտ սխալի չափը (3.79), կարելի է պնդել, որ 2016թ. համեմատությամբ Հայաստանի հանրային ոլորտի կոռուպցիայի ընկալումը 2017թ. մնացել է մոտավորապես նույնը: Միևնույն ժամանակ, ԿԸՀ դասակարգման աղյուսակում Հայաստանը առաջադիմել է 6 տեղով, իսկ եթե դասակարգման 2017թ. աղյուսակից հանենք բոլոր այն երկրները (թվով 4 երկիր), որոնք ընդգրկված չեն եղել 2016թ. դասակարգման աղյուսակներում, ապա առաջընթացը կկազմի 9 տեղ:[1]



Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարածաշրջանային բաժանմամբ Հայաստանը ներառված է ***Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա*** տարածաշրջանի մեջ (տե՛ս 2017թ. ԿԸՀ համապատասխան տարածաշրջանի աղյուսակը): Այդ տարածաշրջանի մեջ

ներառված են Եվրամիության անդամ չհանդիսացող բալկանյան երկրները (***Չերնոգորիա***, ***Սերբիա***, ***Բոսնիա և Հերցեգովինա***, ***Ալբանիա***, ***Մակեդոնիա*** և ***Կոսովո***), նախկին

[1] Ավելի մանրամասն 2017թ. դասակարգման աղյուսակում ընդգրկված երկրների մասին տե՛ս *Հաճախակի տրվող հարցեր* նյութում: Հարկ է նշել, որ 2017թ. դասակարգման աղյուսակում հայտնված 4 նոր երկրներից 3-ի ԿԸՀ արժեքները գերազանցում են Հայաստանի 2017 թվականի ԿԸՀ արժեքին:

Հայաստան, Երևան, 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
info@transparency.am • www.transparency.am

խորհրդային հանրապետությունները, բացի ԵՄ անդամ ***բալթյան հանրապետություններից*** և ***Թուրքիան***: Տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը Մակեդոնիայի հետ կիսում է 9-10-րդ տեղերը (2016թ. նա զբաղեցնում էր 10-րդ տեղը): Հայաստանը նախկին խորհրդային հանրապետություններից այժմ զիջում է ***բալթյան հանրապետություններին*** և ***Վրաստանին***, որի ԿԸՀ 2017թ. համաթիվը հավասար է **56**-ի (2016թ. **57**-ի փոխարեն կամ նահանջ 1 միավորով), որը դարձյալ ամենաբարձրն է Արևելյան Եվրոպա-Կենտրոնական Ասիա տարածաշրջանում, և ***Բելառուսին***, որի ԿԸՀ-ն 2017թ. նույնպես ունեցավ բարելավում (2016թ. **40**-ից մինչև **44** 2017թ.՝ կամ աճ 4 միավորով):

Ինչպես և նախորդ տարիներին, Հայաստանը, շարունակում է զիջել նաև ***Թուրքիային*** (**40**՝ 2016-ի **41**-ի փոխարեն), որը շարունակում է գրանցել էական նահանջ սկսած 2012-ից, երբ նրա ԿԸՀ արժեքը հավասար էր **49** միավորի: Հայաստանի մյուս երկու հարևանների՝ ***Ադրբեջանի*** և ***Իրանի*** 2017թ. ԿԸՀ համաթվերը 2016թ. համեմատ բարելավվել են 1-ական միավորով, հավասարվելով **31**-ի ***Ադրբեջանի*** դեպքում (**122**-ից **129**-րդ տեղեր) և **30**-ի ***Իրանի*** դեպքում (**130**-ից **134**-րդ տեղեր)՝ առայժմ զիջելով Հայաստանին: Բելառուսից բացի, ԵԱՏՄ անդամ մյուս երկրների ԿԸՀ արժեքները շարունակում են ավելի ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ արժեքից: Մասնավորապես, ***Ռուսաստանի*** ԿԸՀ արժեքը մնացել է **29** միավոր (**135**-ից **142**-րդ տեղեր): Այս տարի նրան հավասարվել է ***Ղրղզստանը***՝ առաջադիմելով 1 միավորով: ***Ղազախստանի*** ԿԸՀ արժեքը ավելացել է 2 միավորով՝ դառնալով 31 (**122**-ից **129**-րդ տեղեր):

Հայաստան, Երևան, 0002, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
info@transparency.am ● www.transparency.am